# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյանի քաղաքային համայնք,
Երևանյան 4, հեռախոս /0266/ 2-38-03, էլ. փոստ՝ noeymberyanhamaynq@ramblerl.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 հոկտեմբերի 2013 թվականի N 38 - Ա

ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ՛՛Տեղական ինքնակառավարման մասին՛՛ օրենքի 16-րդ հոդվածի 14-րդ կետով՝ ***համայնքի ավագանին որոշում է՝***

1. 2013 թվականի դեկտեմբերի 27-ից լուծարել ներքոհիշյալ բյուջետային հիմնարկները՝

- Նոյեմբերյանի քաղաքային գեղարվեստի դպրոց
- Նոյեմբերյանի քաղաքային մարզադպրոց
- Նոյեմբերյանի քաղաքային մշակույթի տուն
- Նոյեմբերյանի քաղաքային գրադարան
- Նոյեմբերյանի մանկական գրադարան

2. Ստեղծել լուծարային հանձնաժողով՝ լուծարվող հիմնարկներում գույքագրում անցկացնելու, հանձնման-ընդունման ակտ կազմելու և լուծարման գործընթացի հետ կապված այլ աշխատանքներ իրականացնելու համար.
   Հանձնաժողովի անդամներ՝ լուծարվող հիմնարկների տնօրեններ և հաշվապահներ, Նոյեմբերյանի քաղաքապետի տեղակալ Խաչիկ Գիշյան – հանձնաժողովի նախագահ, Նոյեմբերյանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Արմինե Ամիրաղյան, Նոյեմբերյանի քաղաքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Արտեմ Բուդաղյան, Նոյեմբերյանի քաղաքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Գիգուշ Գիշյան, Նոյեմբերյանի քաղաքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Մելսիդա Վերանյան:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում վերը նշված հիմնարկների լուծարման գործընթացի ավարտի պահից:

**կողմ** **դեմ** **ձեռնպահ**

ԱՄԻՐԱՂՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ԱՆԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ԱՆՏՈՆՅԱՆ ԿԱՐԵՆ
ԲՈՒԴԱՂՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԹԱԹՈՒԼ
ԳԻՇՅԱՆ ԱՐԱՐԱՏ
ԳԻՇՅԱՆ ՌՈՒԲԻԿ
ՋՈՒՐԱԲՅԱՆ ԱԻԴԱ
ԽԱՉԻԿՅԱՆ ՄԽԻԹԱՐ
ՄԱՄՅԱՆ ՄՀԵՐ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** ՎԱՆՈՒՇ ԱՄԻՐԱՂՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյանի քաղաքային համայնք,
Երևանյան 4, հեռախոս /0266/ 2-38-03, էլ. փոստ՝ noeymberyanhamaynq@ramblerl.ru


# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հոկտեմբերի 2013 թվականի N 39 - Ա

## ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ <<ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ>> ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ԹՎԱՔԱՆԱԿԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ՛՛Տեղական ինքնակառավարման մասին՛՛ օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետով՝ ***համայնքի ավագանին որոշում է՝***

տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ ստեղծել Նոյեմբերյանի քաղաքապետարանի ենթակայության <<Մարզամշակութային կենտրոն,, բյուջետային հիմնարկ, հաստատել նոր հիմնարկի կանոնադրությունը և սահմանել հիմնարկի աշխատակիցների հաստիքացուցակը, թվաքանակը և դրույքաչափերը՝ համաձայն կից ներկայացվող հավելվածի:

| կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|
| ԱՄԻՐԱՂՅԱՆ ԱՐԹՈՒՐ | | |
| ԱՆԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ | | |
| ԱՆՏՈՆՅԱՆ ԿԱՐԵՆ | | |
| ԲՈՒԴԱՂՅԱՆ ՍԱՄՎԵԼ | | |
| ԳԱՍՊԱՐՅԱՆ ԹԱԹՈՒԼ | | |
| ԳԻՇՅԱՆ ԱՐԱՐԱՏ | | |
| ԳԻՇՅԱՆ ՌՈՒԲԻԿ | | |
| ՋՈՒՐԱԲՅԱՆ ԱԻԴԱ | | |
| ԽԱՉԻԿՅԱՆ ՄԽԻԹԱՐ | | |
| ՄԱՄՅԱՆ ՄՀԵՐ | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** ՎԱՆՈՒՇ ԱՄԻՐԱՂՅԱՆ

Հավելված1
Նոյեմբերյանի քաղաքային համայնքի ավագանու
2013 թվականի հոկտեմբերի 24 -ի N 39- Ա որոշման

ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ <<ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ>> ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 19

2. Նոյեմբերյանի ,,Մարզամշակութային կենտրոն,, բյուջետային հիմնարկի աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը ( դրամ ) | ___% հավելավճար* ( դրամ ) | Ամսական աշխատավարձ ( դրամ ) |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 80000 | x | 80000 |
| 2 | Հաշվապահ | 1 | 59524 | x | 59524 |
| 3 | գեղմասվար | 1 | 59524 | x | 59524 |
| 4 | հրահանգիչ | 1 | 59524 | x | 59524 |
| 5 | պարուսույց | 2 | 59524 | x | 59524 |
| 6 | գրադարանավար | 5 | 59524 | x | 59524 |
| 7 | դասատու | 4 | 59524 | x | 59524 |
| 8 | մարզիչ | 2 | 59524 | x | 59524 |
| 9 | Մարզադաշտի պատասխանատու | 1 | 59524 | x | 59524 |
| 10 | հավաքարար | 1 | 59524 | x | 59524 |

Աշխատակազմի քարտուղար ________ Արմինե Ամիրաղյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյանի քաղաքային համայնք,
Երևանյան 4, հեռախոս /0266/ 2-38-03, էլ. փոստ՝ noeymberyanhamaynq@ramblerl.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 հոկտեմբերի 2013 թվականի N 40 - Ա

### ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ <<ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ>> ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ՛՛Տեղական ինքնակառավարման մասին՛՛ օրենքի 16-րդ հոդվածի 15-րդ կետով՝ ***համայնքի ավագանին որոշում է՝***

Տալ համաձայնություն Նոյեմբերյանի ,,Մարզամշակութային կենտրոն,, բյուջետային հիմնարկի տնօրեն նշանակել Մելսիդա Սամադի Վերանյանին:

| կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|
| ԱՄԻՐԱՂՅԱՆ ԱՐԹՈՒՐ | ԳԻՇՅԱՆ ԱՐԱՐԱՏ | ՄԱՄՅԱՆ ՄՀԵՐ |
| ԱՆԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ | ԽԱՉԻԿՅԱՆ ՄԽԻԹԱՐ | |
| ԱՆՏՈՆՅԱՆ ԿԱՐԵՆ | | |
| ԲՈՒԴԱՂՅԱՆ ՍԱՄՎԵԼ | | |
| ԳԱՍՊԱՐՅԱՆ ԹԱԹՈՒԼ | | |
| ԳԻՇՅԱՆ ՌՈՒԲԻԿ | | |
| ՋՈՒՐԱԲՅԱՆ ԱԻԴԱ | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՆՈՒՇ ԱՄԻՐԱՂՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյանի քաղաքային համայնք,
Երևանյան 4, հեռախոս /0266/ 2-38-03, էլ. փոստ՝ noeymberyanhamaynq@ramblerl.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 հոկտեմբերի 2013 թվականի N 41 - Ա

ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ <<ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ԹԻՎ 1 ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ>> ՀՈԱԿԻ, <<ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ԹԻՎ 2 ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ>> ՀՈԱԿԻ, <<ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՀՈԱԿԻ ԵՎ ՔՏՍ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ԹՎԱՔԱՆԱԿԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ՛՛Տեղական ինքնակառավարման մասին՛՛ օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետով՝ ***համայնքի ավագանին որոշում է***

տալ համաձայնություն հաստատել Նոյեմբերյանի քաղաքապետարանի ենթակայության <<Նոյեմբերյանի թիվ 1 նախադպրոցական հաստատություն>> ՀՈԱԿԻ, <<Նոյեմբերյանի թիվ 2 նախադպրոցական հաստատություն>> ՀՈԱԿԻ, <<Նոյեմբերյանի երաժշտական դպրոց>> ՀՈԱԿԻ և ՔՏՍ Նոյեմբերյանի համայնքային հիմնարկի աշխատակիցների հաստիքացուցակը, թվաքանակը և դրույքաչափերը՝ համաձայն կից ներկայացվող 1-4 հավելվածների:

| կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|
| ԱՄԻՐԱՂՅԱՆ ԱՐԹՈՒՐ<br>ԱՆԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ<br>ԱՆՏՈՆՅԱՆ ԿԱՐԵՆ<br>ԲՈՒԴԱՂՅԱՆ ՍԱՄՎԵԼ<br>ԳԱՍՊԱՐՅԱՆ ԹԱԹՈՒԼ<br>ԳԻՇՅԱՆ ԱՐԱՐԱՏ<br>ԳԻՇՅԱՆ ՌՈՒԲԻԿ<br>ՋՈՒՐԱԲՅԱՆ ԱԻԴԱ<br>ԽԱՉԻԿՅԱՆ ՄԽԻԹԱՐ<br>ՄԱՄՅԱՆ ՄՀԵՐ | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՎԱՆՈՒՇ ԱՄԻՐԱՂՅԱՆ**

Հավելված1

Նոյեմբերյանի քաղաքային համայնքի ավագանու

2013 թվականի հոկտեմբերի 24-ի N 41- Ա որոշման

,,ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ԹԻՎ 1 ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ,, ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը` 11
2. ,,Նոյեմբերյանի թիվ 1 նախադպրոցական հաստատություն,, ՀՈԱԿ-ի աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը ( դրամ ) | ___% հավելավճար* ( դրամ ) | Ամսական աշխատավարձ ( դրամ ) |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 72000 | x | 72000 |
| 2 | Հաշվապահ | 1 | 59524 | x | 59524 |
| 3 | դաստիարակ | 2 | 59524 | x | 59524 |
| 4 | դաստիարակի օգնական | 2 | 59524 | x | 59524 |
| 5 | երաժշտական դաստիրակ | 1 | 59524 | x | 59524 |
| 6 | բուժքույր | 1 | 59524 | x | 59524 |
| 7 | խոհարար | 1 | 59524 | x | 59524 |
| 8 | տնտեսվար | 1 | 59524 | x | 59524 |
| 9 | այգեպան-պահակ | 1 | 59524 | x | 59524 |

Աշխատակազմի քարտուղար ____________ Արմինե Ամիրաղյան

Հավելված 2
Նոյեմբերյանի քաղաքային համայնքի ավագանու
2013 թվականի հոկտեմբերի 24-ի N 41- Ա որոշման

„ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ԹԻՎ 2 ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ„ ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 17
2. „Նոյեմբերյանի թիվ 2 նախադպրոցական հաստատություն„ ՀՈԱԿ-ի աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը ( դրամ ) | ___% հավելավճար* ( դրամ ) | Ամսական աշխատավարձ ( դրամ ) |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 72000 | x | 72000 |
| 2 | Հաշվապահ | 1 | 59524 | x | 59524 |
| 3 | դաստիարակ | 4 | 59524 | x | 59524 |
| 4 | Փոխարինող դաստիարակ | 1 | 59524 | x | 59524 |
| 5 | դաստիարակի օգնական | 4 | 59524 | x | 59524 |
| 6 | երաժշտական դաստիրակ | 1 | 59524 | x | 59524 |
| 7 | ընտ. կոորդինատոր | 1 | 59524 | x | 59524 |
| 8 | բուժքույր | 1 | 59524 | x | 59524 |
| 9 | խոհարար | 1 | 59524 | x | 59524 |
| 10 | տնտեսվար | 1 | 59524 | x | 59524 |
| 11 | այգեպան/պահակ | 1 | 59524 | x | 59524 |
| | | | | | |

Աշխատակազմի քարտուղար ________ Արմինե Ամիրաղյան

Հավելված 3

Նոյեմբերյանի քաղաքային համայնքի ավագանու

2013 թվականի հոկտեմբերի 24-ի N 41- Ա որոշման

„ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ„ ՀՈԱԿԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 24
2. „Նոյեմբերյանի երաժշտական դպրոց„ ՀՈԱԿ-ի աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը ( դրամ ) | ___% հավելավճար* ( դրամ ) | Ամսական աշխատավարձ ( դրամ ) |
|---|---|---|---|---|---|
| 1 | տնօրեն | 1 | 67000 | x | 67000 |
| 2 | Հաշվապահ | 1 | 59524 | x | 59524 |
| 3 | ուսմասվար | 1 | 59524 | x | 59524 |
| 4 | Գործավար/ գանձապահ | 1 | 59524 | x | 59524 |
| 5 | գրադարանավար | 1 | 59524 | x | 59524 |
| 6 | դաշնամուր լարող | 1 | 59524 | x | 59524 |
| 7 | դասատու | 12 | 59524 | x | 59524 |
| 8 | դասատու | 4 | 59524 | x | 59524 |
| 9 | հավաքարար | 1 | 59524 | x | 59524 |
| 10 | պահակ, վառարան վառող | 1 | 59524 | x | 59524 |

Աշխատակազմի քարտուղար ________________ Արմինե Ամիրաղյան

Հավելված 4

Նոյեմբերյանի քաղաքային համայնքի ավագանու

2013 թվականի հոկտեմբերի 24-ի N 41- Ա որոշման

ՔՏՍ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 21

2. ՔՏՍ Նոյեմբերյանի համայնքային հիմնարկի աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը ( դրամ ) | ___% հավելավճար* ( դրամ ) | Ամսական աշխատավարձ ( դրամ ) |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 80000 | x | 80000 |
| 2 | Հաշվապահ | 1 | 59524 | x | 59524 |
| 3 | օպերատոր | 1 | 59524 | x | 59524 |
| 4 | հարկահավաք | 2 | 59524 | x | 59524 |
| 5 | Տնտեսվար/էլեկտրիկ | 1 | 73000 | x | 73000 |
| 6 | բանվոր | 4 | 59524 | x | 59524 |
| 7 | վարորդ | 4 | 59524 | x | 59524 |
| 8 | հավաքարար | 6 | 59524 | x | 59524 |
| 9 | պահակ | 1 | 59524 | x | 59524 |

Աշխատակազմի քարտուղար ____________ Արմինե Ամիրաղյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյանի քաղաքային համայնք,
Երևանյան 4, հեռախոս /0266/ 2-38-03, էլ. փոստ՝ noeymberyanhamaynq@ramblerl.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հոկտեմբերի 2013 թվականի N 42 - Ա

## ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Ղեկավարվելով ՛՛Տեղական ինքնակառավարման մասին՛՛ Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ մասով և 32-րդ հոդվածի 1-ին մասով, ՛՛Իրավական ակտերի մասին՛՛ Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով *համայնքի ավագանին որոշում է***

1. Հաստատել Նոյեմբերյանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքը՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Հաստատել Նոյեմբերյանի քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 2 հավելվածի:
3. Նոյեմբերյանի քաղաքային համայնքի ղեկավարին՝ Նոյեմբերյանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու առաջարկությամբ մեկշաբաթյա ժամկետում սահմանված կարգով դիմել ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմին:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2014 թ. հունվարի 1-ից:

| կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|
| ԱՄԻՐԱՂՅԱՆ ԱՐԹՈՒՐ<br>ԱՆԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ<br>ԱՆՏՈՆՅԱՆ ԿԱՐԵՆ<br>ԲՈՒԴԱՂՅԱՆ ՍԱՄՎԵԼ<br>ԳԱՍՊԱՐՅԱՆ ԹԱԹՈՒԼ<br>ԳԻՇՅԱՆ ԱՐԱՐԱՏ<br>ԳԻՇՅԱՆ ՌՈՒԲԻԿ<br>ՋՈՒՐԱԲՅԱՆ ԱԻԴԱ<br>ԽԱՉԻԿՅԱՆ ՄԽԻԹԱՐ<br>ՄԱՄՅԱՆ ՄՀԵՐ | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՆՈՒՇ ԱՄԻՐԱՂՅԱՆ

Հավելված 1
Նոյեմբերյան քաղաքային համայնքի ավագանու
2013 թվականի հոկտեմբերի 24-ի N 42 - Ա որոշման

# ԿԱՌՈՒՑՎԱԾՔ
# ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Կառուցվածքային ստորաբաժանում

1. Ներքին աուդիտի բաժին

Առանձնացված ստորաբաժանում

2. ՔԿԱԳ բաժին

Հավելված 2
Նոյեմբերյան քաղաքային համայնքի ավագանու
2013 թվականի հոկտեմբերի 24-ի N 42 - Ա որոշման

# ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը` 22
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափեր

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը ( դրամ ) | ___% հավելավճար* ( դրամ ) | Ամսական աշխատավարձ ( դրամ ) |
|---|---|---|---|---|---|
| 1 | Համայնքի ղեկավար | 1 | 230000 | x | 230000 |
| Հայեցողական պաշտոններ | | | | | |
| 2 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 140000 | x | 140000 |
| 3 | Համայնքի ղեկավարի օգնական | 1 | 115000 | x | 115000 |
| 4 | Համայնքի ղեկավարի խորհրդական | 1 | 115000 | x | 115000 |
| Համայնքային ծառայողներ | | | | | |
| 5 | Աշխատակազմի քարտուղար 1.2-1 | 1 | 135000 | x | 135000 |
| 6 | Ներքին աուդիտի բաժինի պետ 2.1-2 | 1 | 115000 | x | 115000 |
| 7 | Քկազ բաժնի պետ 1.3-1 | 1 | 115000 | x | 115000 |
| 8 | Գլխավոր մասնագետ 2.3-1 | 1 | 110000 | x | 110000 |
| 9 | Գլխավոր մասնագետ 2.3-2 | 1 | 110000 | x | 110000 |
| 10 | Գլխավոր մասնագետ 2.3-3 | 1 | 110000 | x | 110000 |
| 11 | Գլխավոր մասնագետ 2.3-4 | 1 | 110000 | x | 110000 |
| 12 | Գլխավոր մասնագետ 2.3-5 | 1 | 110000 | x | 110000 |
| 13 | Առաջատար մասնագետ 3.1-4 | 1 | 87000 | x | 87000 |
| 14 | Առաջատար մասնագետ 3.1-6 | 1 | 87000 | x | 87000 |
| 15 | Առաջատար մասնագետ 3.1-8 | 1 | 87000 | x | 87000 |
| 16 | Առաջատար մասնագետ 3.1-10 | 1 | 87000 | x | 87000 |
| 17 | Առաջին կարգի մասնագետ 3.2-1 | 1 | 68000 | x | 68000 |
| 18 | Առաջին կարգի մասնագետ Քկազ բաժնի 3.2-6 | 1 | 68000 | x | 68000 |
| Տեխսպասարկման անձնակազմ | | | | | |
| 19 | վարորդ | 1 | 90000 | x | 90000 |
| 20 | հավաքարար | 2 | 59524 | x | 59524 |
| 21 | պահակ | 1 | 59524 | x | 59524 |

Աշխատակազմի քարտուղար ________________ Արմինե Ամիրաղյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյանի քաղաքային համայնք, Երևանյան 4, հեռախոս /0266/ 2-38-03, էլ. փոստ՝ noeymberyanhamaynq@ramblerl.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հոկտեմբերի 2013 թվականի N 43 - Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ 2013 Թ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԸ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՛՛Տեղական ինքնակառավարման մասին՛՛ Հայաստանի Հանրապետության օրենքի 69-րդ հոդվածով և հաշվի առնելով Նոյեմբերյան համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ***համայնքի ավագանին որոշում է***

Նոյեմբերյան համայնքի 2013 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի հաղորդումները 01.10.2013 թ. դրությամբ ընդունել ի գիտություն:

| կողմ | դեմ | ձեռնպահ |
| --- | --- | --- |
| ԱՄԻՐԱՂՅԱՆ ԱՐԹՈՒՐ<br>ԱՆԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ<br>ԱՆՏՈՆՅԱՆ ԿԱՐԵՆ<br>ԲՈՒԴԱՂՅԱՆ ՍԱՄՎԵԼ<br>ԳԱՍՊԱՐՅԱՆ ԹԱԹՈՒԼ<br>ԳԻՇՅԱՆ ԱՐԱՐԱՏ<br>ԳԻՇՅԱՆ ՌՈՒԲԻԿ<br>ՋՈՒՐԱԲՅԱՆ ԱԻԴԱ<br>ԽԱՉԻԿՅԱՆ ՄԽԻԹԱՐ<br>ՄԱՄՅԱՆ ՄՀԵՐ | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՆՈՒՇ ԱՄԻՐԱՂՅԱՆ

2012 թ. – 2013 թ. 9 ամիսների ծախսերի կատարման հաշվետվություն

| հ/հ | Անվանումը | 2013 թ. | 2012 թ. |
|---|---|---|---|
| 1 | Աշխատավարձ | 37832.1 | 31393.3 |
| 2 | Սոց. հատկացում | -- | 7449.7 |
| 3 | Էներգետիկ ծառայություններ | 2009.3 | 1350.6 |
| 4 | Կապի ծառայություններ | 1183.2 | 1192.8 |
| 5 | Ներկայացուցչական | 1234.5 | 1035.0 |
| 6 | Գործուղումներ | 590.0 | 555.0 |
| 7 | Գույքահարկի ավտոմատացման համակարգի սպասարկում | 124.2 | 79.4 |
| 8 | Գրասենյակային նյութեր | 252.0 | 480.0 |
| 9 | Տրանսպորտային նյութեր | 4743.5 | 4352.0 |
| 10 | Մասնագիտական ծառայություններ | 477.0 | 405.0 |
| 11 | Հատուկ նպատակային նյութեր | 998.6 | 480.7 |
| 12 | Կենցաղային և հանրային սննդի նյութեր | 843.8 | 600.0 |
| 13 | Սուբսիդիա | 19889.5 | 18739.1 |
| 14 | Այլ նպաստներ բյուջեից | 3666.0 | 1875.0 |
| 15 | Աղբահանում և ջրամատակարարում | 374.9 | 338.1 |
| 16 | Տեղեկատվական ծախսեր | 575.0 | 515.5 |
| 17 | Միջոցառումներ | 675.0 | 600.0 |
| 18 | Այլ հարկեր, տուրքեր | 95.0 | 96.0 |
| 19 | ԳԱՄԿ | 30.0 | 27.0 |
| 20 | Մեքենաների և սարքավորումների ընթ.նորոգ. | 350.0 | 78.3 |
| 21 | ՆՀՄ և "Հույսի կամուրջ" | 390.0 | 315.0 |
| 22 | Վարչական սարքավորումների ձեռքբերում | 2769.0 | 300.0 |
| 23 | Փողոցային լուսավորության ընթացիկ նորոգում | 1849.7 | 958.0 |
| | Ընդամենը | ***80952.3*** | ***73215.5*** |
| | Աշխատավարձի և սոցի % - ը ծախսերի մեջ | 46.73 | 53.05 |

Հազար դրամ

| | եկամտի անվանումը | 2013 թ. | | | 2012 թ. | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | տարեկան պլան | փաստացի 9 ամիս | կատարման % | տարեկան պլան | փաստացի 9 ամիս | կատարման % |
| 1 | Գույքահարկ | 11000.0 | 7028.0 | 63.89 | 10000.0 | 6740.2 | 67.4 |
| 2 | Հողի հարկ | 3500.0 | 1630.1 | 46.58 | 3300.0 | 1455.2 | 44.1 |
| 3 | Տեղական տուրքեր | 2380.0 | 1888.9 | 79.37 | 3130.0 | 1863.8 | 59.6 |
| **Ընդամենը սեփական եկամուտներ** | | **16880.0** | **10547.0** | **62.48** | **16430.0** | **10059.2** | **61.22** |
| 4 | Վարձակալություն հողի և տարածքի | 6900.0 | 3950.4 | 57.25 | 7900.0 | 4941.5 | 62.6 |
| 5 | Դոտացիա | 71330.1 | 53497.6 | 75.0 | 66424.6 | 49818.4 | 75.0 |
| 6 | Սուբվենցիա | 4258.3 | 3624.0 | 85.1 | 2384.6 | 1716.9 | 72.0 |
| 7 | Սուբվենցիա | 8714.8 | 4313.2 | 49.49 | | | |
| | Պետական տուրքեր | 6000.0 | 3672.8 | 61.21 | 9000.0 | 3848.3 | 42.76 |
| | Պետության կողմից պատվիրակված լիազորություններ | 2654.37 | 1636.9 | 61.67 | 2600.0 | 1346.7 | 51.8 |
| | Այլ եկամուտներ | 6343.6 | 4241.7 | 66.86 | 9950.3 | 3119.1 | 31.35 |
| | Ընդամենը | 123081.17 | 85483.6 | 69.45 | 114689.5 | 74850.1 | 65.26 |

Հողի օտարման մուտք /2013 թ. Ֆոնդային 4579.8/ Հողի օտարման մուտք /2012 թ. Ֆոնդային 1464.4/

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյանի քաղաքային համայնք,
Երևանյան 4, հեռախոս /0266/ 2-38-03, էլ. փոստ` noeymberyanhamaynq@rambleri.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 հոկտեմբերի 2013 թվականի N 44 - Ն

## ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ մասով և ՛՛Տեղական ինքնակառավարման մասին՛՛ Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով ***համայնքի ավագանին որոշում է***

տալ համաձայնություն համայնքի 2013 թ բյուջեում կատարել փոփոխություն, այն է՝

Համայնքի բյուջեի եկամտային մասի 1342 տողում պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման նպատակով ֆինանսավորմանն ավելացած 30.48 հազար ՀՀ դրամը և համայնքի բյուջեի գործառնական դասակարգման 11 բաժնի 1 խմբի 2 դասի տնտեսագիտական դասակարգման 4891 հոդվածից 448.7 հազար ՀՀ դրամը ուղղել

1. գործառնական դասակարգման 01 բաժնի 3 խմբի 3 դասի տնտեսագիտական դասակարգման 4112 հոդված 30.48 հազար ՀՀ դրամ
2. գործառնական դասակարգման 05 բաժնի 1 խմբի 1 դասի տնտեսագիտական դասակարգման 4264 հոդված 200.0 հազար ՀՀ դրամ
3. գործառնական դասակարգման 10 բաժնի 7 խմբի 1 դասի տնտեսագիտական դասակարգման 4729 հոդված 248.7 հազար ՀՀ դրամ:

| **կողմ** | **դեմ** | **ձեռնպահ** |
|---|---|---|
| ԱՄԻՐԱՂՅԱՆ ԱՐԹՈՒՐ<br>ԱՆԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ<br>ԱՆՏՈՆՅԱՆ ԿԱՐԵՆ<br>ԲՈՒԴԱՂՅԱՆ ՍԱՄՎԵԼ<br>ԳԱՍՊԱՐՅԱՆ ԹԱԹՈՒԼ<br>ԳԻՇՅԱՆ ԱՐԱՐԱՏ<br>ԳԻՇՅԱՆ ՌՈՒԲԻԿ<br>ՋՈՒՐԱԲՅԱՆ ԱԻԴԱ<br>ԽԱՉԻԿՅԱՆ ՄԽԻԹԱՐ<br>ՄԱՄՅԱՆ ՄՀԵՐ | | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** ՎԱՆՈՒՇ ԱՄԻՐԱՂՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզիՆոյեմբերյանի քաղաքային համայնք,
Երևանյան 4, հեռախոս /0266/ 2-38-03, էլ. փոստ՝ noeymberyanhamaynq@ramblerl.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հոկտեմբերի 2013 թվականի N 45 – Ն

ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 Թ ՀԱՄԱՐ <<ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ ԵՎ ՎՃԱՐՆԵՐ>> ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական տուրքերի և վճարների'' մասին Հայաստանի Հանրապետության օրենքով ***համայնքի ավագանին որոշում է***

տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատել Նոյեմբերյան համայնքի 2014 թ համար նախատեսված տեղական տուրքերն ու վճարները:

### *Տ Ե Ղ Ա Կ Ա Ն Տ Ո Ւ Ր Ք Ե Ր*

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների /ներառյալ՝ ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

***հիմնական օբյեկտների համար՝***

ա/ մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար տեղական տուրք սահմանել՝

Չորս հազար հինգ հարյուր դրամ

բ/ սույն կետի "ա" ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա/ 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար տեղական տուրք սահմանել՝

*ինը հազար դրամ*

բբ/ 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար տեղական տուրք սահմանել՝

*տասնհինգ հազար դրամ*

բգ/ 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար տեղական տուրք սահմանել՝

*քսանմեկ հազար դրամ*

բդ/ 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար տեղական տուրք սահմանել՝

*երեսուն հազար դրամ*

*ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝*

գ/ մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար տեղական տուրք սահմանել՝

*Ինը հարյուր դրամ*

դ/ 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար տեղական տուրք սահմանել՝

Հազար հինգ հայուր դրամ

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի /համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա/ չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն տեղական տուրք սահմանել՝

Ինը հարյուր դրամ

բ/ բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի "ա" ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով

գ/ նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում ՝ ստորգետնյա/ շինարարության կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, "Տեղական տուրքերի և վճարների մասին" օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝

*Ինը հարյուր դրամ*

4. Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և /կամ/ ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում ոգելից խմիչքների և /կամ/ ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝

4.1. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար տեղական տուրք սահմանել՝

*2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ*

4.2. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար տեղական տուրք սահմանել՝

*2500 /*երկու հազար հինգ հարյուր/ *դրամ*

5. Համայնքի տարածքում

ա/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրք սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար `

*երեք հարյուր հիսուն ՀՀ դրամ՝ 1քմ-ի համար*

բ/ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝

*մեկ հարյուր հազար դրամ*

գ/ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերի խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝

*քսան հազար դրամ*

գա/ Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝

երեք հազար հինգ հարյուր ՀՀ դրամ.

Ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝

Հազար ՀՀ դրամ:

5.1. ,,Թանկարժեք մետաղների մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի առաջին մասին համապատասխան՝ համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առքուվաճառքի թույլտվության յուրաքանչյուր տարվա համար տեղական տուրք սահմանել՝

*հիսուն հազար դրամ*

6. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները /սաունաները/, խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանել՝

ա/ առևտրի օբյեկտների համար՝

*քսանհինգ հազար դրամ*

բ/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝

*հիսուն հազար դրամ*

գ/ բաղնիքների /սաունաների/ համար `

*երկու հարյուր հազար դրամ*

դ/խաղատների կազմակերպման համար՝

*հինգ հարյուր հազար դրամ*

ե/ շահումով խաղերի կազմակերպման համար՝

*երկու հարյուր հիսուն հազար դրամ*

*զ/ վիճակախաղերի կազմակերպման համար՝*

*մեկ հարյուր հազար դրամ*

7. Համաքաղաքային կանոններին համապատասխան քաղաքային համայնքների տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար՝ տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

*հինգ հարյուր դրամ*

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության մեկ քառակուսի մետրի տեղական տուրք սահմանել՝

ա/ ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝

*մեկ հազար դրամ*

բ/ թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝

*երեք հազար դրամ*

գ/ այլ արտաքին գովազդի համար՝

*մեկ հազար դրամ*

դ/ դատարկ գովազդային վահանակների համար՝

*յոթ հարյուր դրամ*

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանել՝

*հինգ հարյուր դրամ*

Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

Հիսուն հազար ՀՀ դրամ

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանել՝

*տասը հազար դրամ*

11. Համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում կազմակերպված վճարովի կայանատեղերում ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը կայանելու համար՝

1) Յուրաքանչյուր մեկ ժամվա համար

*հարյուր դրամ*

2) Յուրաքանչյուր մեկ օրվա համար

*հինգ հարյուր դրամ*

3) Յուրաքանչյուր մեկ շաբաթվա համար

*հազար հինգ հարյուր դրամ*

4) Յուրաքանչյուր մեկ ամսվա համար

*վեց հազար դրամ*

5) Յուրաքանչյուր մեկ տարվա համար

*երեսուն հազար դրամ*

## *2. ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ*

1. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու ու հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝

*հինգ հազար դրամ*

2. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝

*երեք հազար դրամ*

2. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից
ա/ մրցույթներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակցության վճար սահմանել՝

*հինգ հազար դրամ*

բ/ աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակցության վճար սահմանել՝

*տաս հազար դրամ*

| **կողմ** | **դեմ** | **ձեռնպահ** |
|---|---|---|

ԱՄԻՐԱՂՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ԱՆԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ
ԱՆՏՈՆՅԱՆ ԿԱՐԵՆ
ԲՈՒԴԱՂՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԹԱԹՈՒԼ
ԳԻՇՅԱՆ ԱՐԱՐԱՏ
ԳԻՇՅԱՆ ՌՈՒԲԻԿ
ՋՈՒՐԱԲՅԱՆ ԱԻԴԱ
ԽԱՉԻԿՅԱՆ ՄԽԻԹԱՐ
ՄԱՄՅԱՆ ՄՀԵՐ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՎԱՆՈՒՇ ԱՄԻՐԱՂՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզինոյեմբերյանի քաղաքային համայնք,
Երևանյան 4, հեռախոս /0266/ 2-38-03, էլ. փոստ՝ noeymberyanhamaynq@ramblerl.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 հոկտեմբերի 2013 թվականի N 46 - Ն

## ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ 2014 Թ ՀԱՄԱՐ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՛՛Աղբահանության և սանիտարական մաքրման՛՛ մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ և 15-րդ հոդվածներով ***համայնքի ավագանին որոշում է***

տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատել Նոյեմբերյան քաղաքում աղբահանություն իրականացնելու համար հետևյալ դրույքաչափերը՝

1. Նոյեմբերյան քաղաքի տարածքում աղբահանության վճար սահմանել
   ա/ կենցաղային աղբի համար՝ ըստ հաշվառված անձանց քանակի, համայնքում անձնագրային հաշվառման կանոններով, ըստ հասցեի հաշվառում ունեցող և /կամ/ բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 100 ՀՀ դրամ:
   բ/ ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝ ըստ ծավալի 1 խորանարդ մետր աղբի համար՝ 1500 ՀՀ դրամ, կամ ըստ զանգվածի՝ 1 տոննա աղբի համար՝ 5000 ՀՀ դրամ:

| կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|
| ԱՄԻՐԱՂՅԱՆ ԱՐԹՈՒՐ | | |
| ԱՆԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ | | |
| ԱՆՏՈՆՅԱՆ ԿԱՐԵՆ | | |
| ԲՈՒԴԱՂՅԱՆ ՍԱՄՎԵԼ | | |
| ԳԱՍՊԱՐՅԱՆ ԹԱԹՈՒԼ | | |
| ԳԻՇՅԱՆ ԱՐԱՐԱՏ | | |
| ԳԻՇՅԱՆ ՌՈՒԲԻԿ | | |
| ՋՈՒՐԱԲՅԱՆ ԱԻԴԱ | | |
| ԽԱՉԻԿՅԱՆ ՄԽԻԹԱՐ | | |
| ՄԱՄՅԱՆ ՄՀԵՐ | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՆՈՒՇ ԱՄԻՐԱՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզինոյեմբերյանի քաղաքային համայնք,
Երևանյան 4, հեռախոս /0266/ 2-38-03, էլ. փոստ՝ noeymberyanhamaynq@rambler.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 հոկտեմբերի 2013 թվականի N 47 - Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՛՛Տեղական ինքնակառավարման մասին՛՛ Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով ***համայնքի ավագանին որոշում է.***

տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ Սաշիկ Արտաշի Մաճկալյանին պատկանող հասարակական սպասարկման օբյեկտի ընդլայնման նպատակով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը հողի գործող կադաստրային արժեքով ուղղակի վաճառքի կարգով օտարելու:

Հողամասի տվյալներն են՝

Հասցե՝ Բարեկամության փողոց թիվ 14/1, մակերես 0.00159 հա, ծածկագիր 11-004-0110-0065:

| կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|
| ԱՄԻՐԱՂՅԱՆ ԱՐԹՈՒՐ<br>ԱՆԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ<br>ԱՆՏՈՆՅԱՆ ԿԱՐԵՆ<br>ԲՈՒԴԱՂՅԱՆ ՍԱՄՎԵԼ<br>ԳԱՍՊԱՐՅԱՆ ԹԱԹՈՒԼ<br>ԳԻՇՅԱՆ ԱՐԱՐԱՏ<br>ԳԻՇՅԱՆ ՌՈՒԲԻԿ<br>ՋՈՒՐԱԲՅԱՆ ԱԻԴԱ<br>ԽԱՉԻԿՅԱՆ ՄԽԻԹԱՐ<br>ՄԱՄՅԱՆ ՄՀԵՐ | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՆՈՒՇ ԱՄԻՐԱՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզինոյեմբերյանի քաղաքային համայնք,
Երևանյան 4, հեռախոս /0266/ 2-38-03, էլ. փոստ՝ noeymberyanhamaynq@ramblerl.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 հոկտեմբերի 2013 թվականի N 48 – Ն

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, ՙՙՏեղական ինքնակառավարման մասին՚՚ Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ **համայնքի ավագանին որոշում է՝**

տալ համաձայնություն օտարելու համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը և օտարվող հողամասերի 1 /մեկ/ քմ-ի համար սահմանել մեկնարկային գներ՝ համաձայն կից ներկայացվող աղյուսակի:

| կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|
| ԱՄԻՐԱՂՅԱՆ ԱՐԹՈՒՐ | | |
| ԱՆԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ | | |
| ԱՆՏՈՆՅԱՆ ԿԱՐԵՆ | | |
| ԲՈՒԴԱՂՅԱՆ ՍԱՄՎԵԼ | | |
| ԳԱՍՊԱՐՅԱՆ ԹԱԹՈՒԼ | | |
| ԳԻՇՅԱՆ ԱՐԱՐԱՏ | | |
| ԳԻՇՅԱՆ ՌՈՒԲԻԿ | | |
| ՋՈՒՐԱԲՅԱՆ ԱԻԴԱ | | |
| ԽԱՉԻԿՅԱՆ ՄԽԻԹԱՐ | | |
| ՄԱՄՅԱՆ ՄՀԵՐ | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՆՈՒՇ ԱՄԻՐԱՂՅԱՆ

Համայնքային սեփականություն հանդիսացող հողերի աճուրդ-վաճառք

| Լոտ | Անվանումը | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը | Նպատակային նշանակությունը | Հողատեսքը | Գործառնական նշանակությունը | Մեկնարկային գին | Սահմանափակումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Նոյեմբերյան համայնք | ք. Նոյեմբերյան Զ.Անդրանիկի փողոց թիվ 10/1 | 11-004-0049-0117 | 0.001386 հա | բնակավայրի | բնակավայրի | Բնակելի կառուցապատման | 5000 ՀՀ դրամ | |
| 2 | Նոյեմբերյան համայնք | ք. Նոյեմբերյան Կամոյի փողոց թիվ 7/2 | 11-004-0048-0047 | 0.002352 հա | բնակավայրի | բնակավայրի | Բնակելի կառուցապատման | 5000 ՀՀ դրամ | |
| 3 | Նոյեմբերյան համայնք | ք. Նոյեմբերյան 26 Կոմիսարների փողոց թիվ 18/3 | 11-004-0038-0017 | 0.00240 հա | բնակավայրի | բնակավայրի | Բնակելի կառուցապատման | 5000 ՀՀ դրամ | |

Նոյեմբերյանի քաղաքապետարանի աշխատակազմի

քարտուղար Ա. Ամիրաղյան